ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 170-Ա

ԱՍՊՈՒՐԱԿ ԱԼԻԲԵԿԻ ՇԱԽԿՅԱՆԻՆ ԵՎ ԳԱՅԱՆԵ ԱԼԲԵՐՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 06-037-0020-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԾԱԾԿՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ և 202-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Ասպուրակ Ալիբեկի Շախկյանի դիմումը, անձնագրերի պատճեները, սեփականության իրավունքի N 25122020-06-0078 վկայականը, բնակելի տան տեխնիկական վիճակի մասին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 13.01.2024թ. տրված N 01-1/25Ե դրական եզրակացությունը, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՉՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» Ա/Ձ-ի կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, Թեղուտ գյուղի վարչական ղեկավարի կողմից 10.12.2024թ. տրված N 8765 տեղեկանքը՝

որոշում եմ.

1.Օրինականացնել Ասպուրակ Ալիբեկի Շախկյանին և Գայանե Ալբերտի Գևորգյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի համայնքի Թեղուտ գյուղ, 3-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 1 հասցեում գտնվող, 06-037-0020-0001 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.36151 հա մակերեսով հողամասում, 2019թ. Ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2024EHTFYZ ծածկագրով հաշվառված, 109.1 քմ արտաքին մակերեսով (96.8 քմ ներքին մակերեսով) ծածկով բնակելի տան մասը:

2. Ինքնակամ կառուցված շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Օրինականացված ծածկով բնակելի տան մասի համար սահմանված 81062 (ութանասուն մեկ հազար հայուր վաթսուներկու) ՀՀ դրամ արժեքով վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Նշված իրավունքն ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ. հունվարի 24
ք. Ալավերդի